

ՎԱՂՈՒԱՆ ԶԱՅՆԸ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐ

ՅԵՂԱՓՈՒԿԱՆՈՒԹԻՒՆ

Կրնանք ըսել թէ մեր ցեղային նկարագիրը ոչ մէկ ատեն արտայայտուեցաւ այնքան ուժգնօրէն, ոչ մէկ ատեն համադրուեցաւ իր արժանիքին եւ արատներուն կրկնակի իրայայտութեանը մէջ, որչափ վերջին հինգ տարիներու շրջանին: Հաւաքական մեծ յուզումները, հարկաւորաբար, միշտ ունեցած են յատկութիւնը՝ ցուցնելու ազգի մը մտաւորականութիւնը իր զարգացումի ծայրագոյն աստիճանին մէջ:

Այսօր թերեւս աւելորդ չըլլայ անդրադառնալ այդ խոռվքի կեանքին ամենակարեւոր մէկ կէտին վրայ, որ վերջին տարիներու յաւիտենական ու ցաւագլին այժմէութիւնն է, — մեր քաղաքական ըմբռնումներուն հարցը:

Եթէ այնքան զժուար է իմաստութեան եւ ինքնամիտիմի հակազդեցութիւն մը ըստեղծել ժամանակակից հայ մտքերու մէջ, աւոր համար է որ մատնանիջ եղած արատը արդիւնքն է, ամէն բանէ առաջ, մտաւորական ընդհանուր վիճակի մը, կնճռոտ ներգործումներու հետեւանքը եւ որուն սկզբնապատճառը պէտք է փնտռել յեղափոխական ըմբռնումին կազմութեան մէջ իսկ:

Նկատենք հայ ճշմարիտ յեղափոխականի մը տիպարը, ուղղամիտ եւ անշահախնդիր ծառայողի մը նկարագիրը: Դարաւոր ստրկութիւններէ հտքը, գիտակցութիւնը կարթննայ յամբօրէն: Ասիկա գործն է այնքան տառապանքներու սաստկացումին՝ որքան մտաւոր ազդեցութիւններու արդիւնքը, արագ ընթերցումներու, խանդավառ գրգռումներու տրամա-

բանական հետեւանքը: Բարոյական թանձր անզգայութեանը մէջ, ուր կսկծալի համակերպութիւններու ժառանգականութիւնը սպաննած էր ամէն հպարտութիւն, ամէն արժանապատուութիւն, կը ծնի յանկարծ ընդվզումի կատաղութիւնը, վրէժին բովանդակ մղումովը: Ու ալ լինցած է զգացումներու վերածնութիւն մըն է որ կը կատարուի որուն բուռն յորձանքին առջեւ տեղի պիտի տայ ամէն ինչ:

Աչքերը յառած երջանիկ ապագային որուն զիւթիչ հեռապատկերը զինովցուց զինքը, ու ցնցուած ամէն վայրկեան նորանոր կեղեքումներու տեսքէն, պիտի քալէ ան անընդհատ անձնուիրութեան եւ մահուան ճամբուն մէջ, առանց երբէք կասելու յաղթանակին անստուգութենէն, առանց վարանելու դժնդակ պատրանքին հաւանականութեանը առջեւ:

Անոնցմէ չեմ որոնք պիտի ուզէին ուրանալ այս խոռվքին մեծ գեղեցկութիւնը: Բայց պէտք է խոստովանինք անկեղծօրէն թէ, իր այս սահմանին մէջ, անիկա — նուաստացընող իմաստովը չէ որ կը գործածեմ հոս այս բառը — ամբողջ բնագոյում եղաւ մանաւանդ: Իրաւունքի ըմբռնումին քով, պակսեցաւ մ զի նոյնքան գերազանց հասկացողութիւնը յուժին: Մեր պահանջումներուն արդարութիւնը քաղաքակց մեր աչքերուն ուրիշ ամէն նկատում, գործնական ոգիի էն անհրաժեշտ մտահոգութիւնները:

Անտարակոյս՝ անասնական ու բիրտ ուժին ջատագովումը չէ որ պիտի ուզէի ընել հոս: Անիկա ցցուեցաւ մեր առջեւ իր ամէնէն քաւմնելի արտայայտութեանը մէջ, ու մենք, ցաւով ազնուականացած հայրենիքներուն է՛ն նուիրականին զաւակները, մենք առաջինները պէտք է ըլլանք ըմբոստացումի ձայնը բարձրացնելու անոր անարգ ու անիծուած բռնակալութեանը դէմ: Անտարակոյս՝ մարդկայնօ-

րէն ու տրամաբանօրէն Իրաւունքը պէտք է ըլլայ յաղթանակին միակ կշիռը, արդարութեան միակ տեսակէտը: Սակայն, ընկերութեան այս վիճակին մէջ ուր օրէնքը եւ ճշմարտութիւնը մշտնջենապէս կը պղծուին, ուր արծաթը եւ թաւը միահեծան իշխողներն են մարդկութեան ճակատագրին, պարտականութիւնը ունէինք մենք, ահագին աղէտքներու սպառնալիքին տակ, տիրանալ նախ՝ ամէն պահանջումէ առաջ՝ անհրաժեշտ Ուժին, ու հասկընալ զայն մանաւանդ, որպէսզի չկրկնուին գէթ մեր պարտութիւնները:

Թերեւս Ուժին այսքան գիտակից ըմբռնումին պահանջը շատ ըլլայ՝ ժողովուրդներու կրքոտ խանդավառութեանը համար: Դժբաղդաբար անոնք որ պաշտօնը ստանձնեցին առաջնորդելու Հայ ազգը իր ազատութեան պայքարին մէջ, մեր յեղափոխական գործիչները, զգալի տարբերութիւն մը չունեցան անկից իրենց մտաւորական կարողութիւններով: Կէս գիտակիցներ եղան ինչպէս անոնք որոնց կը հրամայէին, ու իմաստութեան այս անլուր պակասին առջեւ ոչ ոք գտնուեցաւ որ յեղափոխական մը ըլլալով հանդերձ, տարրական ողջմըտութեան խօսք մը ըսէր, յարմար ժամուն:

Բռնակալութեան դէմ այս մոլեռանդ ու յուսահատ կռիւը անշուշտ պիտի մնայ մեր մեծագոյն հպարտութիւններէն մէկը: Մենք չէ որ պիտի չխոնարհէինք Գնունիի մը պաշտելի յիշատակին առջեւ: Երբ սակայն ամբողջ ազգի մը կեանքին հարցն է որ կը ներկայանայ մեզի, երբ՝ էն սխրալի դիւցազնութիւններն իսկ վեր բարձրանալով իրենց անհատական նըկարագրէն՝ անմիջական առնչութիւններու կը հասնին արտաքին աշխարհին հետ, ալ պէտք է զազրին գեղեցկագիտական նկատումները, որքան որ թանկագին ըլլան անոնք: Երբ անհատ մը, ընկճուած կեղեքումներու շղթային տակ, փառաւոր մաքառումի մը մէջ վերջ կուտայ իր գոյութեան, կը սքանչանանք անոր վրայ եւ կարգարացնենք զայն: Բայց ամբողջ ազգ մը չի կրնար հետեւիլ այս տրամաբանութեան, միլիոնաւոր էակներ չեն կրնար ճգմուել, մեռնիլ, անօգուտ սքանչացումը ու անկարող գթութիւնը վաստկելու համար միմիայն: Էն զարհուրելի ոճիւրն է ասիկա զոր անգիտակցօրէն կը գործենք մարդկութեան դէմ,

աններելի ինքնասպանութիւն մը որ պիտի չը կրնայ արգարանալ ո՛չ մեր հերոսութիւններով եւ ոչ ալ մեր ցաւերուն սաստկութիւնովը: Ո՛չ ալ մէր ցաւերուն սաստկութիւնովը... որովհետեւ իրերու այս ահաւոր վիճակը, պէտք է չզազրինք յայտարարելէ, մեր գործն է ամէն բանէ առաջ: Որովհետեւ բնաւ չըրինք ինչ որ պէտք էր ընել, ինչ որ իմաստութիւնը, ազգային գերագոյն շահերուն նկատումը կը խրատէին մեզի:

Անոնց համար որ անձնուիրութիւնը եւ բարի կամքը ունին օգտակար ըլլալու Հայրենիքին, մահուան մէջ չէ որ պիտի կայանար ճշմարիտ հայրենասիրութիւնը: Գարմանելու համար մեր վէրքերը, հասնելու համար մեր երազներուն իրականացումին, մեզի տարբեր ճիգեր պէտք են, տարբեր ըմբռնումներ:

Ազատութեան մեծ պայքարին մէջ, մերն է Իրաւունքը, բայց յաղթելու համար պէտք է ջանանք տիրանալ Ուժին: Եթէ քաղաքական բազմադիմի պատճառներ մեզի արգելք կըլլան զայն գտնելու յեղափոխականութեան մէջ, պէտք է դիմենք ուրիշ աղբիւրներու:

Այն օրէն իվեր ուր տրտում ապահովութիւնը ունեցանք մեր զէնքի շարժումներուն անօգուտութեանը՝ եթէ ոչ մշտնջենապէս, գէթ ներկայ շրջանին մէջ, այս ուղղութիւնը միակն էր որուն պէտք էր հետեւիլ: Յեղափոխականութիւնը դատապարտուած էր այլ եւս: Բառին տարտամ ու առածգական երեւոյթը սակայն շուարեցուց մէկէ աւելի պարզամիտներ: Ու այսօր ոչ միայն մեզի պէտք է համոզել մեր բարի կտրիճները յեղափոխութեան եւ յեղափոխակաւորութեան հիմնական տարբերութեան մասին, այլ նոյնիսկ մեր բոլոր կուսակցականները, գրեթէ առանց բացառութեան:

Կը խաբուին անոնք որ պիտի կարծէին գտնալ այս տողերուն մէջ էն պզտիկ պարսաւը Յեղափոխութեան դէմ: Կը խաբուին անոնք որ պիտի կարծէին թէ բոլոր գեղեցկութիւնը զոր «յեղափոխութիւն» բառը եւ «յեղափոխական» տիտղոսը կրնան բովանդակել, կը կայանայ միմիայն նիւթական ըմբոստացումին, արիւնհեղութիւններու եւ բռնութեան միջոցներուն մէջ: Ինչ որ պէտք է սիրենք անոնց մէջ խղճ-

մըտանքներու ինքնագէտ զարթումն է, ժողովուրդի մը ջերմ ու գիտակից ծարաւը արգարութեան: Յեղափոխութեան գաղափարը կը կայանայ ո՛չ թէ կոյր անձնապաշտպանութիւններու բնազդականութեանը՝ այլ Չարիքին ամբողջական եւ խոհուն ըմբռնումին մէջ: Ու մենք յեղափոխականներ պիտի մնանք նորէն, ու հարստահարութեան դէմ մեր սրտմըտութիւնը, մեր Իրաւունքի ճշմարիտ հասկացողութիւնը պիտի բաւեն Հայ ժողովուրդին բարոյական մեծութեան, եթէ նոյնիսկ հրաժարինք մեր ուժերէն ու մեր ցոյցերէն:

Ու պիտի չվաբանիմ աւելցնելու, որքան հեթանոս որ թուի ըլլալ շատերու համար այս մտածումը, թէ՛ երբ յեղափոխութեան գաղափարէն կանցնինք անոր իրականացումին, այսինքն յեղափոխականութեան, որով կը յորջորջուին բռնութեան միջոցները՝ հիմնականապէս տարբեր բարոյական միջավայրի մը մէջ է որ կը մտնենք: Մեր կուսակցականներուն էն մեծ սխալներէն մէկը եղաւ ներկայացնել յեղափոխականութիւնը իբրեւ ուրոյն արժանիք մը, անհրաժեշտ ուղղութիւն մը, իբրեւ նպատակ մը: Ո՛չ սակայն, յեղափոխականութիւնը երբէ՛ք նպատակ մը չէ, այլ միմիայն միջոց մը իրականացնելու համար մեր բաղձանքները: Այս տեսակէտն է միայն որ իմաստ մը պիտի տայ արիւնհեղութիւններուն, ըլլան անոնք մերինը կամ մեր թշնամիներունը: Դատողութեան այս եղանակն է միայն որ պիտի արդարացնէ վրէժը ու սպանութիւնը: Այո՛, միջոց մը որ պիտի ծառայէ նուիրական նպատակի մը, ու եթէ արդիւնաւորութիւնը կը պակսի անոր, պէտք է մէկ կողմ գնենք գայն, ինչպէս անօգուտ գործիք մը, փնտռելու համար լաւագոյն ուրիշ մը:

Յեղափոխութեան գաղափարին եւ յեղափոխականութեան այս խորունկ զանազանութիւնը կը հաստատուի ամենուրեք: Ինչ որ կը սիրենք 89ի փառաւոր դէպքին մէջ՝ վրիժառու խուժանը չէ որ գնաց նետուիլ ուժովներուն վրայ, յանձնեց անոնցմէ հազարներու գլուխը կառափնատին, հրդեհի տուաւ, սպաննեց ու աւերեց այնքան կատաղութիւնով որ զինքը կեղեքած էին: Յեղափոխութիւններուն մէջ սքանչացանք մանաւանդ զանոնք պատրաստող բեղմնաւոր մտաւորականութեանը վը-

րայ, աղնուական խորհողներուն վրայ որոնց գործը եղան անոնք, բարքերու ընաշրջումին, եղբայրութիւններու խռէալին վրայ:

Բարոյական զարգացում եւ տնտեսական յառաջդիմութիւն, ահաւասի՛կ ՄԻԱԿ ՄԻՋՈՅԸ: Այն շրջանին եւ այն պայմաններուն մէջ ուր կապրինք, աշխարհիս վատութեան ու թրքական Ուժին զիմաց, յեղափոխականութեան միակ հետեւանքը պիտի ըլլայ մեզի առաջնորդել պարտութենէ պարտութիւն: Բայց նոյնիսկ եթէ գար այն անյուսալի օրը ուր արդիւնաւոր կարենայ ըլլալ ան, պէտք է որ ճարձեր ըլլայ քան ինչ որ եղաւ մինչեւ այսօր: Փոխանակ այս դիւրին ու աննշան խլրտումներուն, փոխանակ այս անօգուտ մահերուն ուր կը կորսնցնենք ազգային կորովին լաւագոյն մասը, պէտք է որ ունենանք Ուժը ու Գիտակցութիւնը մանաւանդ, որովհետեւ պէտք է խոստովանինք, աւա՛ղ, եթէ հպարտացանք գեղեղեցիկ առաքինութիւններու առջեւ, տեսանք նաեւ, մէկէ աւելի անգամներ, հաստատուելը ամենատրտում ճշմարտութիւններու: Քանին՛ք մեր մէջէն ճանչցան այն երիտասարդը որուն անարժանութեան պերճախօս պարսաւը կընէր Պարթեւեան՝ այս էջերուն մէջ իսկ՝ եւ զոր անգլիական շնականութիւնը կը ցուցադրէր պիղծ հետաքրքրութիւններու: Քանին՛ք արդեօք, գերագոյն վայրկեանին, կրցան հասնիլ այնքան սեւ անասնացումի, այնքան ահաբեկիչ անարգութեան . . . :

Բարոյական բարձրացումի այս անհրաժեշտ գործը մեր առաջին մտահոգութիւնը պէտք է ըլլայ: Պայքարին համար զոր պիտի շարունակենք բարբարոսութեան դէմ, ապականութիւններու այս անցեալին ճանաչումը լաւագոյն օժանդակութիւնը պիտի ըլլայ մեզի, ու պէտք է որ միշտ անդրադառնանք հոն, ո՛չ թէ յուսահատելու համար մեր նուաստացումէն այլ տիրանալու համար քիչ մը աւելի գիտակցութեան: Գերագոյն պարտքը անոնց որ կուզեն ծառայել Հայրենիքի վերակենդանացումին յայտարարել է, բարձրօրէն, մեր արատներուն ճշմարտութիւնը, մեր գեղեցիկ արժանիքներուն քով: Ապագան հոտ է, մեր խանդին բոլոր յուսատուութիւնովը, ճակատագրականութիւններու բովանդակ երկիւղովը . . . :

ԼԵՒՈՆ ԱՐՄԻՆԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

Պ Ա Յ Պ Ա Ն Ո Ղ Ա Կ Ա Ն

Չեմ գիտեր թէ երբէք գոյութիւն ունեցա՞ւ մեր մէջ, մեր քաղաքական մանրադիտական կեանքին մէջ՝ պահպանողական գիտակից ու պարկեշտ մարմին մը: Պահպանողականութիւնը ոչ ամիրայական շրջանին, ոչ ալ անկից վերջ, անոր մնացորդը եզոզ քանի մը առաւել կամ նուազ ազնուաշուք թափթփուքներով, ոչ ալ վերջի քառորդ դարու մէջ բազմացած մեր գոեհիկ բառվրնիներուն, մեր այլանդակ «մենծ աղա»ներուն արջառովը կրցած է ներկայացուիլ մեր մէջ, իբրեւ սկզբունքներու եւ դաւանանքներու ուրոյն ամբողջութիւն մը:

Ազնուականութիւն մըն ալ չունինք գոնէ որ Իրամինը չըլլար եւ որուն կարենայինք տալ պահպանողականի տիտղոսը, իր ընկերային լայն առումին մէջ:

Այս բառը կը կրկնուի սակայն, ատենէ մը իվեր, ամէն անգամ որ կուզենք բաժնել պատասխանատուութիւնը մեր բոլոր տառապանքին: Ասիկա նոյնիսկ արդարացում մը, փախուստի պատրուակ մը կըլլայ մեր ունեւորներուն բերնին մէջ, ամէն անգամ որ դիմում կըլլայ իրենց, իրենց դրամին՝ դարմանելու համար ազգային ահարկու թշուառութիւնը:

— Մենք չէինք պատճառը, անո՞նք էին: Մենք՝ պահպանողական... անո՞նք՝ յեղափոխական...:

Տխմար կեղծաւորնե՛րը: Անամօթ լրբութիւն մը կայ այս արդէն ուսիկ — եթէ անկեղծ ալ ըլլար — չքմեղանքին մէջ. որովհետեւ այդ մարդիկները սու՛տ կը խօսին. անոց մէջ ո՛չ մէկը համոզուած մը եղած է, ու եթէ դիպուածին մէկ ապուշ ու հրաշալի կատակովը յաջողէին մեր «յեղափոխականները»՝ ատոնք առաջինները պիտի ըլլային յայտարարելութէ... «իրենք աղէ՛ն վատահ էին» ու պոռալու... «կեցցէ՛ Յեղափոխութիւնը»:

Ու ասիկա ամօթալի կերպով չի՞ մատնուիր երբ Նուրեան մը, իր անարգ շահերուն համար ազգային գործերու մէջ տապալակելէ վերջ, մեր խեղճուկրակ յեղափոխականներուն

յուսահատական խաղբութեան վաղորդայնը, կելլայ սա շնական, սա հսկայական խօքը կընէ.

— Երե ես հաւնոգումս ըրայի թե Հայկական դասը կարելի եր շահիլ յեղափոխութեամբ Արիխարիւ պիտ խեղճեւորու կը ձգեի անոր առաջնորդութիւնը... ես՛, ես՛ կը վարեի յեղափոխականները...:

Նուրեան յեղափոխական գործիչ՝ ասիկա թերեւս տարօրինակ չթուէր մեր խանդավառ ու երեւակայոտ հայրենակիցներէն շատերուն, բայց Նուրեան հայրենասէ՛ր՝ ո՞վ պիտի կրնար յաւակնիլ ասիկա ըմբռնել...:

Ի՛նչպէս սակայն կը պոռայ այդ խօսքին մէջ — որ՝ նոյնիսկ անկեղծ՝ պիտի անհետեւի ու անարամաբանական ըլլար պանդխտողականի մը բերնին մէջ — ուսիկ սարքիւնսնիք որ եղաւ այդ կեղծիքի ու վատութեան մարդը, իր ազգային քաղաքական կեանքին մէջ, եւ որ սակայն պահպանողական է՛ն բարձր հեղինակութիւնը նկատուեցաւ ու կը նկատուի դեռ մեր մէջ:



Պահպանողական՝ մեր Պօլիսի մենծ աղաները: Բայց ասոնց պահպանողականութիւնը եկեղեցիին չորս պատերէն անդին անցա՞ւ անգամ մը: Թաղական խորհրդին սենեակէն դուրս, հիւանդանոցի կամ անկելանոցի մը հոգաբարձութեան սեղանէն անդին, իրենց ընկերային ո՞ր ըմբռնումներուն, ո՞ր ազգային մտահոգութիւններուն, նոյնիսկ իրենց նեքին կեանքին ո՞ր շնորհալի արարքին կամ սովորութեանը մէջ երեւցաւ, մտքերնուն անգամ անցաւ այդ բառին գոյութիւնը:

Ի՞նչ կըսէք Աբիկ Ունճիանի մը պահպանողականութեանը, օրինակի համար, որ ժամուն գաւիթէն, տիրացուներուն Տէր Ողորմեան ընդմիջելով՝ «հի՛ն Տէր Ողորմեա կուզե՛մ...» ոռնալէն անդին չանցնիր:

Պահպանողական՝ մեր Մանչեսթրի գրեթէ բոլոր վաճառականներն ու վաճառականիկները, ո՛հ, այս վերջինները մանաւանդ, ու իրենց կէս-անօթի գրագիրներն ալ երբեմն, առանց գիտնալու թէ ի՞նչու, բայց, ասոր համար, ոչ նուազ խանդավառ քան իրենց աղաները որոնց բոլոր պահպանողականութիւնը սակայն, — ինչպէս բոլոր իրենց հայրենասի-

րութիւնը — պաշտա մը պակաս կամ աւելի շիրք
ընելու տրտում հաշուի մը մէջ կը կայանայ:

* *

Եւ յետոյ ի՞նչ ըրին այս բոլոր հոյա-
կապ պահպանողականները. հակազդեցութեան
ի՞նչ շարժում յառաջ բերին կամ գոնէ ի՞նչ
տարտամ կամէութիւն ցուցուցին՝ յեղափոխա-
կան անխորհուրդ ու յախուռն գործունէու-
թիւնը իր սկիզբներուն չեղոքացնելու խելա-
ցի ու ազնիւ եռանդով մը:

Ատոր համար ի՞նչ կը պակսէր իրենց.
նութական միջոցները, — օ՛հ, չէ անշուշտ, —
հապա ի՞նչ. ուղե՞ղ մը ու լսուելու արժանի
ձա՞յն մը, — օ՛հ, այո՛ անշուշտ, — բայց մենք
հանճարի մարդու մը պէտք չպիտի ունենայինք
ասանկ արգահատելիօրէն պարզ խնդրի մը մէջ
յստակ տեսնալու համար: Ուժով ու յամառ
հաւատքի ձայն մը ու նախնական հաստ ող-
ջամտութիւն մը պիտի բաւէին մեզի վայր գըլ-
տորելու մեր երազներուն բարձրութենէն ու
ցուցնելու մեր ինքնակոչ առաջնորդներուն
բոլոր անեղ ունայնութիւնը իրենց պոռչտուք-
ներուն ու՛ ատոնցմով ծնած՝ բոլոր յուսահատ
մաքառումներուն:

Ինչո՞ւ չհիմնեցին պահպանողական կու-
սակցութիւն մը, պահպանողական մամուլ մը,
նոյնիսկ արտասահմանի մէջ, դէմ դիմաց ու ա-
ւելի ազատութեամբ կոռուելու համար մեր յե-
ղափոխական կուսակցութիւններուն հետ:

* *

Այս միամիտ հարցումը ըրի օր մը Ման-
չեսդրի Հայ գաղութին ալեւոր Տուայէնին
— է՛ն ֆառուշ պահպանողականը որ ես երբէք
ճանչցած ըլլամ, ու է՛ն գիտակիցն ալ, ինչ որ
զինքը չարգիլեր միեւնոյն ատեն ջերմ քօզի-
րխխոյ մը ըլլալէ, — ու կուզէ՞ք գիտնալ թէ
ինչպէս պատասխանեց ինծի համակրելի ու ոս-
կելի ծերունին.

— Յեղափոխական զաղափարներով գը-
րելը շատ դիւրին է, ըսաւ, ու — գլխու խոր-
հըրդաւոր շարժումով մը — պահպանողակա-
նութիւնը մեր մէջ քարոզելու համար Փօզէֆ
տը Մէսթոի հանճարը ունենալու է...

Իրա՛ւ որ ատկից պակասին չէի սպասեր
իր կողմէն, ու պատուական Տուայէնը կը սիրէ

յաճախ շուարեցնել, երկու չեֆի մէջտեղ, իր
գրասէր փոխառուները — թըքախօս ազգային-
ներ մրժ մասամբ ու մէկ երկու հազուագիւտ
գրաբարագէտներ — անակնկալ յատուկ անուն
ներու արտասանութեամբը անոնց երեսնիվեր:
Արդէն այս Պալլաքեան ահագին ու տարօրի-
նապէս կնճռոտ ու շահեկան դէմքը պիտի ա-
ռիթը ունենամ իր ամբողջական երեւոյթին
մէջ ու իր համակրելի անքրոտաժողը ներկայա-
ցնելու Հայ հասարակութեան. առ այժմ չեմ
կարծեր խոչոր անխորհրդապահութիւն մը գոր-
ծած ըլլալ՝ եթէ գաղափար մը տալու համար
իր կարեւորութեանը՝ յիշեմ բառ մը Նուրեանի
մէկ նամակէն զոր ինծի յանձնեց, գրական
խանդավառութեան օր մը, Ա. Չօպանեանի մէկ
ուրիշ նամակին հետ — երկուքն ալ խնդրա-
գիրբը — որպէսզի... «ոճերը բաղդատեմ ու ը-
սեմ իրեն թէ ո՞րն էր էն աղւորը». — աւելորդ
է ըսել որ Նուրեանինը միայն արժանացաւ իմ
բարձր գնահատումիս, աղաջաւոր Վեհապետինը
նողկալիօրէն տափակ ըլլալով: — Նուրեան իր
գեղաճոճ նամակին մէջ՝ «Անգլիոյ Հայոց Պատ-
րիարքը կը կոչէր շնորհալի Տուայէնը:

Բայց ձգենք այս կենսական(օ) խնդիր-
ները, կուզէի սակայն չմոռնալ թէ այս այն-
քան դաժանօրէն խստապահանջ պահպանողա-
կանը, Փօզէֆ տը Մէսթոի ստուերը ոգելէն
քանի մը օր առաջ, չէր քաշուած, խորհրդա-
պահ անկիւն մը, իր խորունկ ու երկիւղած
հիացումը յայտնելու ինծի... Նազարէկի
«գրական տաղանդին» վրայ:՝՝

* *

Չէ՛, վայելելու միայն ընդունակ — ա-
տոր ալ յաճախ անկարող — մեր եսամուլ ու-
նեւորներուն համար ասանկ զոհողութեան ու
անձնուիրութեան ազնուական մտահոգութիւն-
ներ չէին կրնար արհամարհելի, տղայական ու
անվայել չըլլալ: Եւ յետոյ, անոնք ամենքն ալ
«գիրքի տէր», «գործի տէր» մազիկներ են —
գերազոյն ու ստորնագոյն արդարացումը: Ու
անոնք չէին կրնար ուրիշ կերպով տեսնել ազ-
գային ճակատագիրը, եթէ ոչ իրենց անձնա-
կան հանգիստին առաւել կամ նուազ խաղաղ
իրենց գրամարկներուն առաւել կամ նուազ
լեցուն վիճակէն միայն:

Եւ եթէ եղան անոնց մէջ — անոնցմէ
 դուրս ու հեռու մանաւանդ — մէկ երկու ճըշ-
 մարիտ համոզուածներ, մէկ երկու անվիճելի
 զարգացումով ու կարողութեամբ խմացակա-
 նութիւններ, ատոնք ալ նախընտրեցին չէզոք
 մնալ: Ու մեր մտքերուն համար դառն յաճա-
 խանք մը պիտի մնայ սա թէ՛ Նուպար փաշա
 մը, օրինակի համար, չուզեց, չկրցաւ — նոյն-
 իսկ վտանգելով իր քաղաքական գիրքը ու
 արհամարհելով խորխտաբար ասանկ արարքի
 մը մէջ իրեն սպասող ծիծաղներն ու պիղծ հեզ-
 նութիւնը բոլոր պաշտօնական ցածութիւննե-
 րուն — Նուպար փաշա մը, ժառանգակիւն, չուզեց,
 չկրցաւ կրկնապէս Մեծ Հայն ըլլալ, ու ներ-
 շնջուածի մը, առաքեալի մը պէս, քաղաքէ
 քաղաք շրջել, ու խոնարհիլ, պզտիկնալ մինչեւ
 խօսելու այն աննշան զէվզէկներուն, այն ու-
 ղորմելի յաւակնոտներուն որոնք՝ կործանումի
 ճամբուն մէջ՝ մեր առաջնորդները պիտի ըլլա-
 յին եւ որոնք ճակատագրօրէն պիտի տեսնային,
 պիտի գիտակցութիւնը ունենային — հրաշալի
 ծերունիին առջեւ — իրենց ոչնչութեան ու ի-
 րենց գործելիք ոճիւրին քստմնելի մեծութեանը:

* * *

Բայց Նուպար փաշա — փառաւոր յիշա-
 տակ մը այլեւս — միայն իր անհատական մե-
 ծութեամբն իսկ իրաւունք ունի Հայրենիքի
 երախտագիտութեանը, որովհետեւ բարձրացուց
 Հայ անունը՝ տիեզերական հիացումի արժա-
 նացած իր խմացականութեամբը: Ու նորէն մեծ
 Հայ մը պիտի մնայ, մեզի համար, ան որ դա-
 րուս մեծ մարդերէն մէկը եղաւ մանաւանդ:

Ու ասանկ հոյակապ անունի մը առջեւ՝
 գթութեամբ խառն արհամարհանքով մըն է որ
 կը դառնանք մեր սա միւս ունեւորներուն:

Անոնք, խեղճե՛րը, ոչի՛նչ, բացարձակա-
 պէս ոչի՛նչ պիտի ըլլային առանց իրենց ու-
 նեցած կտոր մը դրամին՝ ուրկից քաջալեր-
 ւած, մարդոտած, խորխտացած, բառվրնիխ ու-
 միկ ունայնամտութիւններով՝ ելեր են սկզբ-
 բունքներու անունով խօսիլ, գաղափարի մար-
 դու հովեր առնել, համոզումներու հանատարիմ
 մնալ ձեւացնել: Օ՛հ, Մաչէսդրցի վաճառականի
 մը ամբողջ մտաւորականութիւնը:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՅԱՂՔՈՒԿԾՆԵՐԸ

Ո՞վ պիտի մտածէ անոնց:
 Է՛ն արգահասեղիներն եւ սակայն անոնք՝
 ազգային փայտաշինի յաջորդող գրկակնի ու ան-
 ըստազուրթեան կեանքի մասնուած քաղաքական
 ու անյոյս սարագիրներուն:

Անյոյս, որովհետեւ կեանքի կոխին մէջ
 մաքառեցի առաջ յաղթածներ եղան անոնք, ու
 գիտե՛ն իրենք աւիկա, ու չեն սպասեր շուսազոյն
 վիճակներու:

Իրենց անկարողութեան գիտակցութիւնը
 չընկճեր գիտե՛նք բարոյապէս, որովհետեւ կը կրկ-
 նորոյ անիկա խաղաղ վստահութեամբք իրենց ա-
 մենակարողութեան — նպաստաւոր պայմաններու
 մէջ, — եւ որովհետեւ գիտե՛ն անոնք որ անգոր-
 օրէն անխրատուեցան ճակասագրէն:

Ու խորիս պիտի մնան անոնք, իրենց խեղ-
 ճութեանը մէջ նոյնիսկ գունաքափ ու կոնսուս-
 ցած: Ու պիտի խեղան անոնք երբեք, երկար, ան-
 գուսպ ու հիւանդ խեղդումով մը ուր խեղդութեան
 խոպոտ շունչ մը պիտի հեռայ: Իրենց խղճեանքի
 պայծառութիւնը ուժգնօրէն վեր կը բռնէ գիտե՛նք
 ու արհաւարհակնի հոյակապ նայածներ կը դնէ
 անոնց մտած աջերուն մէջ:

Անոնք երբե՛ք չպիտի յաջողին: Ու լուռ
 պիտի մնայ իրենց կակիծը, յուսահատօրէն լուռ,
 որովհետեւ — սպասաւք աշակերտներ իրենց վար-
 պէսներուն — ջորովեցան անոնք ժպտն ու ախ-
 ևնոս պնակախեղդութիւններու, շահախնդի ու շեւ-
 կան ուրացումներու, գոե՛նիկ ու ֆաւորակալ կեղ-
 ժաւորութիւններու դիւրին ու անարգ արուեստը:

Նիւթակալ հաւեւոս բարոյութիւն մը ներք
 անոնց սպրիչ, հայրենի յարկի սակ, սրսանելակ
 Տեղոտ ու մաքուր կեանք մը, աշխատութեան ու
 երազակնի կեանք մը: Մտի մարդիկներ ըլլալ ու
 մեծ ըլլալ Տեղոտի, ու պաշտելի խանդավառու-
 մով մը հեշտակեցան իրենց ազնուական երազին:

Միակիսներ ու յաւատներ եղան, երբ դեռ
 հեղեղութիւնը, սպասող ու ցարագին հեղեղութիւնը
 չէր գաբարած իրենց մասաղ հոգիները: Ու գիշեր-
 ներ յուսուցին անոնք, բաց հաստներու վրայ
 հակած ու մերմակ քերքերու առջեւ սարսուռն:
 Այնչէս կրցաւ վրդովել, ոչինչ կրցաւ պղծել իրենց
 հաւաստի յաղթականութիւնները, իրենց յուզիչ, խո-
 րունկ ու արգասակող գիտակցութիւնները:

Ու սարօրինապէս կսնխահասա՛ կրցան անոնք, միս միեմակ, ազսագրուի վերջապէս գիրեմք պաշարող, իրենց վրայ ճնշող՝ ժամանակակից Ինասականութեան միսնեման, կուրցնող ու սիրական ազդեցութեան, ու անկախ մտաւորականներ ըլլալ:

Ու մտաւորական գործունէութեան կեանքի մը կը պատրաստուին, անձնուիրութեան անկեղծ ու ջերմեմանը զգացումներով: Այ կառեմքիսնեմուն ու շրջանը անցած էր, ու ետական ու հեշտանող ախլեթաւթներ չի՛ որ պիտի ոգեին ըլլալ անոնք: Իրենց անբողջ երեսասարդ կորույր, իրենց բովանդակ քանկագին ճիգը իրենց զեղին նուիրելու, անոր ազնուացումին վասնելու մտանդութիւնը առաջնորդած էր գիրեմք, ու սկեպսիկներ չուզեցին ըլլալ անոնք, ու դիտին գոհացումներու մեջ ջրասնեմանախակուեցաւ իրենց փառասիրութիւնը:

Ու յարաշուք գիշեր մը — որուն յարող առտուն իսկ պիտի մկեին բարեւար պայքարը — Փոքորիկը պայքեցաւ, ու փնտհան ու դիտային աշխներ սարին, նեմեցին զանոնք օտար ու անձանօր ախերու վրայ:

Գլխիվայր յարաշար քաւարում մը եղաւ ասիկա: Երբ սրախեցան բիտր զնցումին շուարունեմ՝ մտահացու անձկութեան աստուտում մը՝ սեւան ու անկարողութեան դասապատրուած էին: Իրենց ճիգը սարաւերձօրեմ գրական ու ինասական սիրական եղած էր, ու միջախարը իսպառ կորստած իրենց հաւար, ու ապրելու անեղ հարցը զցուած իրենց առջեմ: Վարձապետներ ու գրողներ ըլլալու պատրաստուած էին ու սեւան ու «վաճառականի գրագիր» ըլլալ պեմք էր պատառ մը հացի հաւար:

Ու ընթրուսացան, ու հայնոյեցին, ու հեմկրցացին խեղճ սկստնայ «ախաւիտեմ»ները:

Հիմա ալ յոգնած եմ ու յուն:

Դասապատրուած ու անօգուտ կեանքեր եմ, որոնց վրայ անողոք ճակատագրականութիւն մը կը ծանրանայ, կը ճնշէ, կը յանտի անողորմ ու անվերջ հաշտանքի կասաղութեանը մը:

Գրուիմին կոր ու յանրաքայլ կերան անընդասակ՝ անձանօր ճակատներէ: Երբեմն կը հանդիպին հայրենակիցներու քաղութեան մը երջանիկ ու յարողած, որ չի ճանչնար գիրեմք ու չի հասկնար անոնց յեզուն: Անոնք իրենց ազգին մեջ

իսկ ախտուածներ եմ, իրենց Մօրք ծիծերեմ կախումած որբեր եղան:

Ու պիտի փնտհան անոնք, անեմքն ալ:

Երբ գրկակնի կեանքը յանրաքայլ ու ապրիկ անոնք փիջ մը անեմ օր մեմեմքով, երբ քրջաւտութիւնը ջրնկնեմ վերջնապէս զանոնք՝ անօրութիւնը, հեշտային ու անօրի Անօրութիւնը պիտի երկարօրեմ, անյագօրեմ, վայրագօրեմ ուսեմ անոնց ուղեղը, ու վայր՝ ցաւագարներ, անհուն, անշարժ աջեմով ցաւագարներ պիտի ըլլան անոնք:

Ու մե՛կը չպիտի մտածեմ անոնք:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՔԱՂՈՒՍ

Յուսահասօրեմ ու պակեղիսօրեմ անստը վերադարձայ,

Թունաւորումած բարեկաւս հաւքուրելու:

Ու բոլոր եղնիկներուն ու կարապետուն հեմ՝ Որ յիմերուն ու հոգիխ անայութիւնը կը հասկնան, [գիշերի մը մեջեմ:

Թաղումը ըրիմք բարեկաւսի՛ ղեկեմքերի կեմ Օ՛ իր մարմինը որջախ ծանր էր իմ յոգնած ուտերուն հաւար,

Ու Մանր որջախ հեմ ու իմ աշխարհանութիւնով իրեմ կարկառուն ուղի աջեմքու:

Յախեմեմական կարապետը քաղումը սօնեցին եղբայրօրեմ, [զերեզնակը փորեցի:

Ու եւ, եղնիկներուն հեմ, սաճանակիւօրեմ, Անստին բոլոր ծանրը յողարկաւոր ըրիմք,

Ու հովը՝ անոնց անձանօր ու սրտում բուրվարը: Ու մօտաւոր ու հեմաւոր փաղափներուն բոլոր

նուիրական զանգակները,

Երկարօրեմ, մտահագմօրեմ ու բարեպաշտօրեմ Արեմեմ աշխ ու անայի գիշերին ըսին քե՛

Բարեկաւ մը անստներու եղնիկներուն ու յիմերու կարապետուն՝

Ու երկայն, նիհար ծանրուն ու հովերուն հեմ՝ Երկիւղածութիւնով իր բարեկաւ մը կը քաղի:

Ծանրը ու հովերը սարիներով ապրեցան, Կարապետը, եղնիկները ու յիմերը անհեմացան,

Զանգակները հիմ եկեղեցիներուն փաղեմուն հեմ մոռցուեցան,

Բայց իմ հոգիս, բայց իմ խեղճ հոգիս,
Յառիսեմակսորէն, սևսաներուն մեջը
Բակսարկոսած մնաց:

ԱՏՈՄ ԵՍՐՃԱՆԵԱՆ

Բարից

ԱՂՕՓՔ

Կարապետը բունաւորում յիներէն յուսա-
հասօրէն գաղթեցին:
Ու սրտու՛մ քոյրս, մեքաւաղճօրէն, բակսին պս-
սերուն սակը եղբայր մը կերագէ:
Շուշանով ծաղկած դաշին վրայ պատերազմը
վերջացաւ: [Գաղի մը կը հեճեաին:
Ու գեճակախորներու մեջէն իշխասնահիներ դա՛-
Օ՛, սնայարեցե՛ք՝, մեր ցաւագին միտերը
ստեղծակ սևիրաւ ձիւնէն,
Դեպի Մասունը ուր Կեանքը աւելի գրած
պիտի ըլլայ մեզի հաւար,
Գերեզմանսունիսն մասունը ուր եղբայրս կը
ֆնանայ:
Հոգիս մեջ այրի կարապ մը կը սակցուի,
Ու հոն, լո՛ւր բարոսած մեռելներու վրայ
Արիւնտ սևճեր մը կուրայ:
Անդաւաղոյճներու բազմութիւններ կակցեցին
արսիս ճաւթներէն,
Ու բոպիկ ոսֆերով կոյրեր սևնեց հե՛ս՝
Աղօրոյի մը պատահերա սաստածային յոյսով:
Ու սնայարսին բոյր շուները աւբողջ գիշեր
մը ոռնացին, [յե՛սոյ՝
Յուսահասօրէն աւագներուն վրայ ողբայի
Մարդկութեան սևճանօք ցաւը ու չի հասկցուիր:
Անճերը դարեցաւ, ալ ձայնը յիսնացայ:
Ստած ջուրերուն սակ ալիքները բակստեղան,
Մեծ ծառերուն տերեւները, հիւանդ բոյուննե-
րու պէս, պզտիկ ճիշերով, վար ինկան,
Ու գիշերը աւալացաւ,
Ու մեճաւոր յուսկիսյիս հե՛ս բոյր մեռելները
Իրարու հաւար աղօթի եղան:

ԱՏՈՄ ԵՍՐՃԱՆԵԱՆ

Բարից

ԱՂԴ

Այս միջոցիս, երբ Անահիտի 32 երեսնե-
րը կամ 64 սիւնակները նեղ կուգան բովան-
գակելու Իմաստալուծեան օգոստափառ Վեհա-
պետին մօնիւմանդալ տխմարութեան արտադրած
անսպառ արձակը, այս միջոցիս, երբ մեծանուն
Խմբագրապետը մոռնալով — օ՛հ, առեւի մը
համար միայն — իր գեղարուեստական երազ-
ները՝ քաղաքագէտ - ընկերաբան - տնտեսագէ-
տի համբաւ մըն ալ աւելցնելու վրայ է — այս
խելացի ու գնահատող ազգին մէջ — իր արդէն
փառաւոր անունին շուրջը՝ — մենք որ եր-
զում ըրած ենք մահացու ֆոնիխոսան մը ընել
իր թերթին, մենք որ ասոր համար ամէն զո-
հողութիւն պարտք մը կը սեպենք, մենք, այո՛,
մենք կը փութանք ասոր նիւթական ապա-
ցոյցը տալ — 8 երեսի վերածելով Վաղարան
Չայնրի 16 ճղճիւմ երեսները:

Բայց մտածելով որ ասիկա ալ չի բաւեր
կործանելու չարագործ Վեհապետը՝ ամբողջ
գիշեր մը, Շայլօք բարեկամիս հետ խորհրդակ-
ցելէ վերջը ուրիշ զոհողութեան մըն ալ պէտք
զգացինք ու որոշեցինք երբեմն, երբեմն միայն
պատահաբար հրատարակել Վաղարան Չայնր:

Ասիկա ըսե՛լ է սակայն թէ, զոհողու-
թեան այս անդիմադրելի խոյանքին մէջ, պիտի
գաղթէինք հրատարակել մեր թերթը, — եթէ
ՄԵՐ ԱՅՆ ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐԻ ՉԱՓ ՊԱՏՈՒԱԿԱՆ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ ՈՐ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՄԵՐ ՉՈՐՍ
ԹԻԻԵՐԸ ՈՒ ՉԵՆ ՄԵՐԺԱԾ՝ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՒ
ԱՆՀԱՒԱՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒՆԵՆԱՅԻՆ ԲԱԺ-
ՆԵԳԻՆԸ ԳՐԿԵԼՈՒ . . . :

Օ՛հ, տխուր հարցումը
ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ՀԱՍՑԷՆ՝

S. BARTEVIAN,
POSTE RESTANTE
LONDON.





